Երկրորդ ընթերցում

Նախագիծ

Կ-1064[4]-20.09.2016-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի փետրվարի 22-ի ՀՕ-126-Ն օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2017 թվականի մայիսի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» և «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ կատարված առաջարկությունների

Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	**Հոդվածը, կետը, ենթակետը, որին վերաբերում է առաջարկությունը**	**Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը**
1	2	3	4
ՀՀ կառավարություն	1.«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 3-րդ հոդված	1. Նախագծի 3-րդ հոդվածում լրացվող 244^{16} -րդ հոդվածի համարակալումը վերանայման կարիք ունի, քանի որ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում արդեն իսկ առկա է 244.16-րդ հոդված:	1. Ընդունվել է. Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 244^{16} -րդ հոդվածը համարակալվել է որպես 244.17-րդ հոդված:

	2.«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 4-րդ հոդված	2. Որպես Նախագծի ուժի մեջ մտնելու ժամկետ նախատեսել 2017 թվականի մայիսի 1-ը: Նշյալ փոփոխությունը կատարել նաև «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերում:	2. Ընդունվել է. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
	3. «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 6-րդ հոդված	3. «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 6-րդ հոդվածի վերնագիրը համապատասխանեց-նել հոդվածի բովանդակությանը: Մասնավորապես՝ նշված հոդվածի վերնագրում	3. Ընդունվել է. «Անցումային դրույթներ» բառերը փոխարինվել են «Եզրափակիչ և անցումային դրույթներ» բառերով:

		«Անցումային դրույթներ» բառերը փոխարինել «Եզրափակիչ և անցումային դրույթներ» բառերով, նկատի ունենալով, որ նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասը, որը վերաբերում է օրենքն ուժի մեջ մտնելու ժամկետին, իր բնույթով հանդիսանում է ոչ թե անցումային, այլ եզրափակիչ դրույթ: Հիշյալ առաջարկությունը բխում է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի պահանջներից, որոնց համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի *եզրափակիչ մասում* կարող են սահմանվել *իրավական ակտն ուժի մեջ մտնելու* ժամկետները:	
	4.«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և	4.«Վարչական իրավախախտումնե-րի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածում «բարձրաստիճան պաշտոնատար անձի գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց մասին	4. Ընդունվել է. Նախագծերում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

	«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծեր	հայտարարագիրը, ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձի գույքի և եկամուտների հայտարարագիրը (այսուհետ՝ սույն հոդվածում՝ հայտարարագիր) դրանք ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց կողմից» բառերը փոխարինել «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի (այսուհետ՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ) կողմից հայտարարագիրը», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում՝ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագիրը», իսկ «Հանրային	

		ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում՝ «հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագիրը» բառերով:	